ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԱՄԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА АМБЕРД

N 01-32
«03» ՄԱՅԻՍԻ 2013թ

ՀԵՌ.(093) 32-59-62
ТЕЛ.(093) 32-59-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝ Ա. Ղահրամանյան

Կից ներկայացնում ենք Ձեզ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի ապրիլ ամսվա ընթացքում ընդունած որոշումներ և հայտնում այն մասին, որ սույն ամսվա ընթացքում արձակած կարգադրություններ չունի:

Առդիր 2 թերթ:

Համայնքի ղեկավարի ժ/պ Լ. Վարդանյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 4169-13
«06» 05 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1-Ա

«15» ԱՊՐԻԼԻ 2013թ. գ. ԱՄԲԵՐԴ

## ՄԱՆՎԵԼ ԲԱԲԱՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք համարելով բժշկի կողմից տրված անաշխատունակության թերթիկը,

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավար՝ Մանվել Բաբայանին համարել հիվանդության արձակուրդի մեջ, սկսած 2013 թվականի ապրիլի 15-ից մինչև սույն թվականի մայիսի 3-ը ներառյալ:
1. Համայնքի ղեկավարի աշխատանքային պարտականությունները նշյալ ժամանակահատվածում դնել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Լևիկ Վարդանյանի վրա:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավարի ժ/պ Լ. Վարդանյան

2013 թվականի ապրիլի 15

գ. Ամբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2-Ա

«18» ԱՊՐԻԼԻ 2013թ. Գ. ԱՄԲԵՐԴ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Իրավական ակտերի մասին» օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և հիմք համարելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի մարտի 30-ի թիվ 01/03.1/962-11 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքում գյուղապետարանի կողմից կատարվելիք գնումների համակարգող նշանակել գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Գայանե Լենդրուշի Նավասարդյանին:
2. Ուժը կորցրած ճանաչել Արմավիրի մարզի Ամբերդի գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի ապրիլի 12-ի Թիվ 1-Ա «Գնումների համակարգող նշանակելու մասին» որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Լ. Վարդանյան

2013 թվականի ապրիլի 18

գ. Ամբերդ